Հավելված
Հաշվեքննիչ պալատի
2020թ. դեկտեմբերի 25-ի թիվ 240-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020

Բովանդակություն

Ներածական մաս 3 էջ

Ամփոփագիր 4 էջ

Հաշվեքննության օբյեկտի
Ֆինանսական ցուցանիշները 5 - 14 էջեր

Անհամապատասխանությունների և խեղաթյուրումների կամ դրանց
բացակայության վերաբերյալ գրառումներ 14 -19 էջեր

Արձանագրված այլ փաստեր 19 էջ

Հետհսկողական գործընթաց 20 էջ

Առաջարկություններ 20 էջ

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի օգոստոսի 7-ի թիվ 137-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ ոստիկանություն:
Հաշվեքննության առարկան	2020 թվականի պետական բյուջեի վեց ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության առարկայի չափանիշները	«Աշխատանքային օրենսգիրք», «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենք, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, պետական գնման պայմանագրեր:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի հունիսի 30-ը :
Հաշվեքննության կատարման ժամկետը	Նախատեսված էր 2020 թվականի օգոստոսի 17-ից մինչև հոկտեմբերի 31-ը: Հաշվեքննությունը կասեցվել է 2020 թվականի սեպտեմբերի 30-ին, վերսկսվել է նոյեմբերի 20-ին:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքին, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանություններին, «Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի» համաձայն Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ ընթացակարգերը :
Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի իններորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Դավիթ Չիբուխչյանը:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ ոստիկանության կողմից առանձին ծրագրային միջոցառումների կատարման համար կնքված պայմանագրերի հաշվեքննությամբ արձանագրվել է, որ երեք դեպքում նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետների խախտման համար 2020 թվականի հուլիսի 1-ի դրությամբ ենթակա էր հաշվարկել և գանձել տույժ՝ գումարային 235.9 հազ. դրամ:

Արձանագրվել է նաև, որ ի տարբերություն N ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-32 ծածկագրով գնման ընթացակարգի, որով «Սվիտեր» ապրանքատեսակի տեխնիկական բնութագրով սահմանվել էր գործվածքի 30 տոկոս բուրդ, 70 տոկոս պոլիէստեր բաղադրություն, N ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԱՊՁԲ-20/10/Բ/2/ԻԾ-6 ծածկագրով գնման ընթացակարգի «Սվիտեր» ապրանքատեսակի համար գործվածքի բաղադրություն չի նախատեսվել և «ՕԲՈՐՈՆ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ից N ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԱՊՁԲ-20/10/Բ/1/ԻԾ-2 պայմանագրով գնվել է գործվածքի անհայտ բաղադրության սվիտերներ: Փաստորեն, այս դեպքում չի կատարվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը՝ «Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը»:

Հաշվեքննության ընթացքում խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել, հայտնաբերվել են ոչ էական անհամապատասխանություններ, որոնք համատարած չեն:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

2020 թվականի առաջին կիսամսյակում ՀՀ ոստիկանությունը ըստ ներկայացված հաշվետվության հավաքագրել է 10,570,037.0 հազ. դրամ բյուջետային եկամուտներ (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

ՀՀ ոստիկանության կողմից 2020 թվականի առաջին կիսամյակում գանձված պետական տուրքի և այլ եկամտատեսակների մուտքերի կատարողական

հազ. դրամ

Բյուջետային եկամուտների անվանում	Հաշվետու ժամանակահատվածի ծրագրային ցուցանիշ	Հաշվետու ժամանակահատվածում ստացված եկամուտ
Պետական տուրքեր	3,682,040.0	2,263,061.5
Պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալությունից եկամուտներ	11,532.3	14,808.4
Իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցների մուտքեր	4,607,183.3	4,531,389.7
ՀՀ ոստիկանության կողմից ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից մուտքեր	5,347,083.7	3,755,447.5
ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից ուսման ծախսերի փոխհատուցման մուտքեր	15,800.0	5,329.9
Ընդամենը	13,663,639.3	10,570,037.0

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ոստիկանության կողմից հավաքագրվել է նախատեսվածից 3,093,602.3 հազ. դրամով պակաս եկամուտներ, որը հիմնականում պայմանավորված է ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության կողմից պահպանվող իրավաբանական և ֆիզիկական անձանց օբյեկտների թվի էական կրճատումով:

2020 թվականի առաջին կիսամյակի համար պետական բյուջեի ծրագրերով ՀՀ ոստիկանության ճշտված պլանը կազմել է 31,104,024.6 հազ. դրամ, ֆինանսավորվել է 28,149,522.5 հազ. դրամ (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

ՀՀ ոստիկանության 2020 թվականի առաջին կիսամյակի ֆինանսավորումը պետական բյուջեից

հազ. դրամ

Ծրագիր, միջոցառում	Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	Ֆինանսավորում	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս
Հասարակական անվտանգության ապահովում				
Հասարակական կարգի պահպանություն, անվտանգության ապահովում և հանցագործությունների դեմ պայքար	12,223,740.3	11,753,031.8	11,742,741.7	11,802,261.2
Պետական պահպանության ծառայությունների կազմակերպում և իրականացում	1,975,179.7	1,874,343.7	1,874,077.1	1,891,548.4
ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումներ	3,332.2	3,332.2	3,332.2	3,332.2
Պետական պահպանության ծառայություններ մատուցող ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կարիքի բավարարում	3,480,607.6	2,620,232.5	2,618,968.0	2,624,896.6
Պետական պահպանության ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կարիքի բավարարում	75.0	75.0	75.0	499.9
Անձնագրերի և վիզաների տրամադրում, բնակչության պետական ռեգիստրի միասնական համակարգի վարում				
Անձի անհատական տվյալների, քաղաքացիության և հաշվառման վերաբերյալ տեղեկությունների ստացման, տրամադրման և փոխանակման ծառայությունների մատուցում, ճամփորդական փաստաթղթերում կենսաչափական տեխնոլոգիաների ներդրում	956,449.1	887,792.2	887,792.2	1,040,494.9
ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տեխնիկական կարիքի բավարարում	20,334.2	-	-	5,285.0
Ոստիկանության աշխատողների և նրանց ընտանիքի անդամների առողջության պահպանում				

Առողջապահական ծառայությունների տրամադրում	454,190.0	437,842.3	437,842.3	437,842.3
Դեղորայքի տրամադրում ոստիկանության բժշկական վարչության ծառայություններից օգտվելու իրավունք ունեցող բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց	28,065.4	11,904.0	11,904.0	34,904.0
ՀՀ ոստիկանության բժշկական վարչության տեխնիկական հագեցվածության բարելավում	399.0	-	-	-
Ոստիկանության կրթական ծառայություններ				
Բարձրագույն մասնագիտական կրթության ծառայություն	460,339.8	383,616.5	383,616.5	383,616.5
Միջին մասնագիտական կրթության ծառայություն	193,725.6	161,438.0	161,438.0	161,438.0
Նախնական մասնագիտական կրթության ծառայություն	128,885.6	107,404.7	107,404.7	107,404.7
Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն				
Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի և վերահսկողության իրականացում	4,757,015.5	4,115,701.8	4,105,881.7	4,143,156.8
Արտասահմանյան պաշտոնական գրոծուղումներ	872.3	852.6	817.0	817.0
ՀՀ ոստիկանության կարիքի բավարարում	8,375.8	-	-	-
Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում				
Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում և ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելում	6,225,735.0	5,695,732.2	5,695,021.3	5,480,444.6
Տրանսպորտային միջոցների պետական հաշվառում	87,885.2	87,068.0	87,068.0	125,141.3
ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանությաուն» ծառայության կարիքի բավարարում	98,817.3	9,155.0	9,155.0	111,652.5
Ընդամենը	**31,104,024.6**	**28,149,522.5**	**28,127,134.7**	**28,354,735.9**

ՀՀ ոստիկանության 2020 թվականի առաջին կիսամյակի ծախսերի ճշտված պլանով նախատեսվել էր 31,104,024.6 հազ.դրամ, ֆինանսավորումը

կազմել է 28,149,522.5 հազ. դրամ կամ ճշտված պլանի 90.5 %-ը, դրամարկղային ծախսը 28,127,134.7 հազ. դրամ կամ ճշտված պլանի 90.4 %-ը:

2020 թվականի պետական բյուջեով նախատեսվել է, որ ՀՀ ոստիկանության կողմից պետք է իրականացվի վեց ծրագրեր, դրանք են՝

1. «Հասարակական անվտանգության ապահովում» ծրագիր, որի 2020 թվականի առաջին կիսամյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 17,682,934.8 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 16,251,015.2 հազ. դրամ կամ ճշտված պլանի 91.9 %-ը, դրամարկղային ծախսը 16,239,194.0 հազ. դրամ կամ ճշտված պլանի 91.8 %-ը: Ծրագրի միջոցառումները հինգն են.

1.1 «Հասարակական կարգի պահպանություն, անվտանգության ապահովում և հանցագործությունների դեմ պայքար» միջոցառում, որի առաջին կիսամյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 12,223,740.3 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 11,753,031.8 հազ. դրամ կամ ճշտված պլանի 96.1 %-ը, դրամարկղային ծախսը՝ 11,742,741.7 հազ. դրամ կամ ճշտված պլանի 96.1 %-ը: Միջոցառման համար սահմանված են արդյունքի տասնյոթ չափորոշիչներ:

1.2 «Պետական պահպանության ծառայությունների կազմակերպում և իրականացում» միջոցառում, որի առաջին կիսամյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 1,975,179.7 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 1,874,343.7 հազ. դրամ կամ ճշտված պլանի 94.9%-ը, դրամարկղային ծախսը՝ 1,874,077.1 հազ. դրամ կամ ճշտված պլանի 94.9%-ը: Միջոցառման համար սահմանված են արդյունքի երեք չափորոշիչներ:

1.3 «ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումներ» միջոցառում, որի առաջին կիսամյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 3,332.2 հազ. դրամ, ֆինանսավորումը և

դրամարկղային ծախսը կազմել են 3,332.2 հազ. դրամ կամ ճշտված պլանի 100 %-ը:

1.4 «Պետական պահպանության ծառայություններ մատուցող ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կարիքի բավարարում» միջոցառում, որի առաջին կիսամյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 3,480,607.6 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 2,620,232.5 հազ. դրամ կամ ճշտված պլանի 75.3%-ը, դրամարկղային ծախսը՝ 2,618,968.0 հազ. դրամ կամ ճշտված պլանի 75.2 %-ը: Միջոցառման համար սահմանված են արդյունքի երեք չափորոշիչներ, որից «Պետական պահպանության ծառայությունների կողմից պահպանվող օբյեկտների թիվ» չափորոշչի ցուցանիշը նախատեսված 4176 հատի փոխարեն՝ փաստացի կազմել է 3633:

1.5 «Պետական պահպանության ծառայություններ մատուցող ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կարիքի բավարարում» միջոցառում, որի առաջին կիսամյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 75.0 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 75.0 հազ. դրամ կամ ճշտված պլանի 100 %-ը: Միջոցառման համար սահմանված են արդյունքի երեք չափորոշիչներ:

2. «Անձնագրերի և վիզաների տրամադրում, բնակչության պետական ռեգիստրի միասնական համակարգի վարում» ծրագիր, որի 2020 թվականի առաջին կիսամյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 976,783.3 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 887,792.2 հազ. դրամ կամ ճշտված պլանի 90.9%-ը: Ծրագրի միջոցառումները երկուսն են.

2.1 «Անձի անհատական տվյալների, քաղաքացիության և հաշվառման վերաբերյալ տեղեկությունների ստացման, տրամադրման և փոխանակման ծառայությունների մատուցում, ճամփորդական փաստաթղթերում կենսաչափական տեխնոլոգիաների ներդրում» միջոցառում, որի առաջին կիսամյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 956,449.1 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 887,792.2 հազ. դրամ

կամ ճշտված պլանի 92.8 %-ը: Միջոցառման համար սահմանված են արդյունքի տասնվեց չափորոշիչներ, որից 7 չափորոշիչների նախատեսված ցուցանիշները, պայմանավորված անձնանց դիմելությունով, չեն կատարվել:

2.2 «ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տեխնիկական կարիքի բավարարում» միջոցառում, որի առաջին կիսամյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 20,334.2 հազ. դրամ: Սակայն, 2020 թվականի առաջին կիսամյակում միջոցառման համար ֆինասավորում չի կատարվել: Միջոցառման համար սահմանված են արդյունքի չորս չափորոշիչներ:

3. «Ոստիկանության աշխատողների և նրանց ընտանիքի անդամների առողջության պահպանում» ծրագիր, որի 2020 թվականի առաջին կիսամյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 482,654.4 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 449,746.3 հազ. դրամ կամ ճշտված պլանի 93.2 %-ը: Ծրագրի միջոցառումները երեքն են.

3.1 «Առողջապահական ծառայությունների տրամադրում» միջոցառում, որի առաջին կիսամյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 454,190.0 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 437,842.3 հազ. դրամ կամ ճշտված պլանի 96.4%-ը: Միջոցառման համար սահմանված են արդյունքի յոթ չափորոշիչներ:

3.2 «Դեղորայքի տրամադրում ոստիկանության բժշկական վարչության ծառայություններից օգտվելու իրավունք ունեցող բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց» միջոցառում, որի առաջին կիսամյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 28,065.4 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 11,904.0 հազ. դրամ կամ ճշտված պլանի 42.4%-ը: Միջոցառման համար սահմանված է «Հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին տրամադրված դեղորայքի տեսականի» չափորոշիչը, որի ցուցանիշը չի կատարվել:

3.3 «ՀՀ ոստիկանության բժշկական վարչության տեխնիկական հագեցվածության բարելավում» միջոցառում, որի առաջին կիսամյակի ծախսը

ճշտված պլանով նախատեսվել էր 399.0 հազ. դրամ: Սակայն, 2020 թվականի առաջին կիսամյակում միջոցառման համար ֆինասավորում չի կատարվել: Միջոցառման համար սահմանված են արդյունքի երկու չափորոշիչներ:

4. «Ուստիկանության կրթական ծառայություններ» ծրագիր, որի 2020 թվականի առաջին կիսամյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 782,951.0 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 652,459.2 հազ. դրամ կամ ճշտված պլանի 83.3%-ը: Ծրագրի միջոցառումները երեքն են.

4.1 «Բարձրագույն մասնագիտական կրթության ծառայություն» միջոցառում, որի առաջին կիսամյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 460,339.8 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 383,616.5 հազ. դրամ կամ ճշտված պլանի 83.3 %-ը: Միջոցառման համար սահմանված են արդյունքի վեց չափորոշիչներ, որից 2 չափորոշիչների ցուցանիշներ, պայմանավորված դիմորդների թվի նվազումով, չեն կատարվել:

4.2 «Միջին մասնագիտական կրթության ծառայություն» միջոցառում, որի առաջին կիսամյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 193,725.6 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 161,438.0 հազ. դրամ կամ ճշտված պլանի 83.3 %-ը: Միջոցառման համար սահմանված են արդյունքի երեք չափորոշիչներ, որից 1 չափորոշչի ցուցանիշը, պայմանավորված դիմորդների թվի նվազումով, չի կատարվել:

4.3 «Նախնական մասնագիտական կրթության ծառայություն» միջոցառում, որի առաջին կիսամյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 128,885.6 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 107,404.7 հազ. դրամ կամ ճշտված պլանի 83.3 %-ը: Միջոցառման համար սահմանված են արդյունքի երեք չափորոշիչներ, որից 1 չափորոշչի ցուցանիշը, պայմանավորված դիմորդների թվի նվազումով, չի կատարվել:

5. «Ուստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն» ծրագիր,

որի 2020 թվականի առաջին կիսամյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 4,766,263.6 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 4,116,554.4 հազ. դրամ կամ ճշտված պլանի 86.4%-ը, դրամարկղային ծախսը՝ 4,106,698.7 հազ. դրամ կամ ճշտված պլանի 86.2%-ը: Ծրագրի միջոցառումները երեքն են.

5.1 «Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի և վերահսկողության իրականացում» միջոցառում, որի առաջին կիսամյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 4,757,015.5 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 4,115,701.8 հազ.դրամ կամ ճշտված պլանի 86.5 %-ը, դրամարկղային ծախսը՝ 4,105,881.7 հազ. դրամ կամ ճշտված պլանի 86.3 %-ը: Միջոցառման համար սահմանված են արդյունքի ութ չափորոշիչներ:

5.2 «Արտասահմանյան պաշտոնական գրոծուղումներ» միջոցառում, որի առաջին կիսամյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 872.3 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 852.6 հազ. դրամ կամ ճշտված պլանի 97.7 %-ը, դրամարկղային ծախսը՝ 817.0 հազ. դրամ կամ ճշտված պլանի 93.7 %-ը:

5.3 «ՀՀ ոստիկանության կարիքի բավարարում» միջոցառում, որի առաջին կիսամյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 8,375.8 հազ. դրամ: Սակայն 2020 թվականի առաջին կիսամյակում միջոցառման համար ֆինասավորում չի կատարվել:

6. «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում» ծրագիր, որի 2020 թվականի առաջին կիսամյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 6,412,437.5 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 5,791,955.2 հազ. դրամ կամ ճշտված պլանի 90.3%-ը, դրամարկղային ծախսը՝ 5,791,244.3 հազ. դրամ կամ ճշտված պլանի 80.2 տոկոսը: Ծրագրի միջոցառումները երեքն են.

6.1 «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում և ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելում» միջոցառում, որի առաջին կիսամյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 6,225,735.0

հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 5,695,732.2 հազ. դրամ կամ ճշտված պլանի 91.5 %-ը, դրամարկղային ծախսը՝ 5,695,021.3 հազ. դրամ կամ ճշտված պլանի 91.5 %-ը: Միջոցառման համար սահմանված են արդյունքի տասներեք չափորոշիչներ:

6.2 «Տրանսպորտային միջոցների պետական հաշվառում» միջոցառում, որի առաջին կիսամյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 87,885.2 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 87,068.0 հազ. դրամ կամ ճշտված պլանի 99.1%-ը: Միջոցառման համար սահմանված են արդյունքի վեց չափորոշիչներ, որից «Տրամադրված հաշվառման համարանիշների քանակ» չափորոշչի ցուցանիշը՝ նախատեսված 58186 զույգի փոխարեն կազմել է 41706 զույգ:

6.3 «ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության կարիքի բավարարում» միջոցառում, որի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 98,817.3 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 9,155.0 հազ. դրամ կամ ճշտված պլանի 9.3%-ը: Միջոցառման համար սահմանված են արդյունքի հինգ չափորոշիչներ:

ՀՀ հաշվեքննիչ պալատի «Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության» ուղեցույցի հիման վրա մշակված մեթոդական ցուցումներով ՀՀ ոստիկանության 2020 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության նվազագույն ծածկույթ է նախատեսվել 16,659,912.5 հազ. դրամ, որը ապահովելու համար հաշվեքննության են ենթարկվել պետական բյուջեի ծրագրերի միջոցառումներով կատարված հետևյալ ծախսերը՝

1. «Հասարակական կարգի պահպանություն, անվտանգության ապահովում և հանցագործությունների դեմ պայքար» միջոցառման շրջանակում աշխատողների վարձատրության և պարգևատրման ծախսեր՝ 11,417,055.4 հազ. դրամ,

2. «Պետական պահպանության ծառայությունների կազմակերպում և իրականացում» միջոցառման շրջանակում աշխատողների վարձատրության և պարգևատրման ծախսեր՝ 1,846,633.8 հազ. դրամ,

3. «Անձի անհատական տվյալների, քաղաքացիության և հաշվառման վերաբերյալ տեղեկությունների ստացման, տրամադրման և փոխանակման ծառայությունների մատուցում, ճամփորդական փաստաթղթերում կենսաչափական տեխնոլոգիաների ներդրում» միջոցառման շրջանակում աշխատողների վարձատրության և պարգևատրման ծախսեր՝ 851,272.7 հազ. դրամ,

4. առանձին ծրագրերի միջոցառումների շրջանակում ՀՀ ոստիկանության կողմից կնքված 30 պայմանագրեր, որոնցով 2020 թվականի առաջին կիսամյակում կատարված ծախսերը կազմել են 2,577,175.7 հազ. դրամ:

Ընդհանուր առմամբ, հաշվեքննության են ենթարկվել ՀՀ ոստիկանության կողմից 2020 թվականի վեց ամիսներին կատարված 16,692,137.6 հազ. դրամի ծախսերը:

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ԴՐԱՆՑ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Հաշվեքննության ընթացքում կատարվել է ՀՀ ոստիկանության աշխատողների աշխատավարձերի և պարգևավճարների հաշվարկի և վճարման ճշտության ընտրանքային ուսումնասիրություն:

ՀՀ ոստիկանության «Հասարակական կարգի պահպանություն, անվտանգության ապահովում և հանցագործությունների դեմ պայքար» (միջոցառում 1), «Պետական պահպանության ծառայությունների կազմակերպում և իրականացում» (միջոցառում 2) և «Անձի անհատական տվյալների, քաղաքացիության և հաշվառման վերաբերյալ տեղեկությունների ստացման, տրամադրման և փոխանակման ծառայությունների մատուցում, ճամփորդական

փաստաթղթերում կենսաչափական տեխնոլոգիաների ներդրում» (միջոցառում 3) բյուջետային ծրագրային միջոցառումներով հատկացված միջոցներով վարձատրվող աշխատողների հաստիքացուցակներից համակարգչային ծրագրի միջոցով կատարվել է 169 աշխատողների պատահական ընտրություն ընդհանուր թվակազմից՝ ըստ պաշտոնների յուրաքանչյուր խմբի: Ընդ որում, ընտրության արդյունքները ճշգրտվել են այնպես, որ յուրաքանչյուր պաշտոնների խմբից ընտրվի առնվազն մեկ աշխատող (աղյուսակ 3):

Աղյուսակ 3

ՀՀ ոստիկանության աշխատողների համակարգչային ծրագրի միջոցով պատահական ընտրություն

Պաշտոնների խումբ	Միջոցառում 1		Միջոցառում 2		Միջոցառում 3	
	ընտրված աշխատողների քանակ	ճշգրտված քանակ	ընտրված աշխատողների քանակ	ճշգրտված քանակ	ընտրված աշխատողների քանակ	ճշգրտված քանակ
Գլխավոր խումբ	4	4	0	1	0	1
Ավագ խումբ	11	11	0	1	0	1
Միջին խումբ	56	56	1	1	2	2
Կրտսեր խումբ	57	58	17	17	0	1
Քաղ. հատուկ ծառայող	1	1	-	-	6	8
Քաղ. աշխատանք կատարող և տեխ. սպասարկող	3	3	2	2	0	1
Ընդամենը	132	133	20	22	8	14

Ընտրված աշխատողների հունվար, փետրվար, մարտ, ապրիլ, մայիս և հունիս ամիսների աշխատավարձերի և պարգևատրումների ցուցակների ուսումնասիրությունից պարզվել է, որ ընտրված աշխատողների աշխատավարձերը և պարգևատրումները հաշվարկվել և վճարվել են օրենսդրության պահանջներին համապատասխան:

Հաշվեքննության ենթարկված ՀՀ ոստիկանության կողմից առանձին ծրագրային միջոցառումների կատարման համար կնքված պայմանագրերը ներկայացված են աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4

Հաշվեքննության ենթարկված ՀՀ ոստիկանության պայմանագրեր

ՀՀ դրամ

Կատարող	Պայմանագրի համար	Պայմանագրի գումար	Առաջին կիսամյակի վճարում
Հասարակական կարգի պահպանություն, անվտանգության ապահովում և հանցագործությունների դեմ պայքար			
«Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ	ՀՀՈՁՄԱՊՁԲ-20/2/Բ/8/ՊԾ-58	25,840,000.0	15,504,000.0
«Բայազետ 1» ՍՊԸ	ՀՀՈՁՄԱՊՁԲ-20/2/Բ/8/ՊԾ-59	18,572,900.0	10,768,332.0
«ՊԱՀԱՊԱՆ» ՍՊԸ	ՀՀԿԱՈՁԳՀԱՊՁԲ-20/10/Բ/2/ԻԾ-6	32,971,800.0	11,027,700.0
«ՕԲՈՐՈՆ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ	ՀՀԿԱՈՁԳՀԱՊՁԲ-20/10/Բ/1/ԻԾ-2	17,604,000.0	6,846,000.0
Ագրոսպասարկում ԱՄ-ի Արտաշատի Շրջան	3769-2020	11,520,000.0	4,800,000.0
Անձի անհատական տվյալների, քաղաքացիության և հաշվառման վերաբերյալ տեղեկությունների ստացման, տրամադրման և փոխանակման ծառայությունների մատուցում, ճամփորդական փաստաթղթերում կենսաչափական տեխնոլոգիաների ներդրում			
«ՍՈՖԹ ՊՐՈՖ» ՍՊԸ	ՀՀ Ո ՄԱ-ԾՁԲ-ԾՍ/2020/ԱՎՎ	37,200,000.0	13,000,000.0
Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի և վերահսկողության իրականացում			
«Դինամո» մարզական հասարակական կազմակերպություն	1	24,464,200.0	12,232,100.0
Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-32-2	83,160,000.0	29,106,000.0
ՄԷՍ-ՏԵՔՍ ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-32-3	36,846,300.0	11,416,575.0
Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-32-4	30,600,650.0	10,709,000.0
Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում և ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելում			
«Հայփոստ» ՓԲԸ	CPS-18-02-20	380,000,000.0	169,244,195.0
«Բիլլ Սթոուն» ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ՀՈԼ-2/ՃՈ-1	53,900,000.0	41,960,606.0
«ԻՆՏԵԼԻՋԵՆԹ ՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ՀՈԼ-2/ՃՈ-2	22,700,000.0	22,700,000.0
«Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ	ԲԸԱՀ ԾՁԲ-03/2017 01/2020	3,272,200,000.0	1,494,080,158.0
«ԻՆՏԵԼԻՋԵՆԹ ՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ	ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-2020-ՃՈ/ՎԿ-8	112,128,000.0	62,757,400.0
«ՈՒԿՌԻՆՎԵՍՏ» ՍՊԸ	ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2020-ՃՈ/ԳՇՆՇ-19	466,800,000.0	143,865,150.0
«ՈՒԿՌԻՆՎԵՍՏ» ՍՊԸ	ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2020-ՃՈ/ՆՇԱՆ-20	40,716,600.0	11,849,640.0
«ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ	ՀՀ Ո-ԳՀԱՊՁԲ-ՌԵԳԻՍՏՐ-2020/ՃՈ	27,000,000.0	6,750,000.0
«ՋԻԷՆՋԻՔԵՅ ԳՐՈՒՊ» ՓԲԸ	ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-ՏՍԿ-ՏՎ-2020/Ա-32	55,212,700.0	10,895,715.0
«ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ	ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-2020-ՃՈ/ՎԱՌԵԼԻՔ-10	162,005,740.0	162,005,740.0
«Էյչ Գրուպ» ՍՊԸ	ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ԿԻՆԵԳՐԱՄ-2020/Ա-15	209,751,540.0	131,296,400.0
«Էյչ Գրուպ» ՍՊԸ	ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ԿԻՆԵԳՐԱՄ-2020/Ա-16	21,064,320.0	15,798,200.0
«ՈՒԿՌԻՆՎԵՍՏ» ՍՊԸ	ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2020-ՃՈ/ԱԶԴԱՆՇԱՆ-21	258,412,000.0	97,939,750.0
Տրանսպորտային միջոցների պետական հաշվառում			
«ԶՆԱԿ ՍՏԱՆԴԱՐՏ» ՍՊԸ	ՀՀ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՀԱՄ-2019/Ա-64.	102,750,000.0	60,000,000.0
ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության կարիքի բավարարում			
«Սիմիկոն ԱՌՄ» ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՃՈ/ՍԱՐՔ-7/1	28,200,000.0	5,640,000.0
«ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ» ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ՃՈ-25/ՕԼԻՆ-ՀԱՄԱԿԱՐԳԻՉ	12,247,500.0	2,450,000.0

Դեղորայքի տրամադրում ամբուլատոր - պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց			
Գոռ Մնացականյան ԱՁ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ/2-2020/Ա-9	14,160,000.0	5,664,000.0
Գոռ Մնացականյան ԱՁ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ/3-2020/Ա-10-6	1,320,000.0	-
Գոռ Մնացականյան ԱՁ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ/5-2020/Ա-12-7	8,910,000.0	3,069,000.0
Առողջապահական ծառայությունների տրամադրում			
«Ջերմուկ Հոտել» ՍՊԸ	Սանատոր ծառայությունների պայմանագի	10,098,000.0	3,800,000.0
Ընդամենը		**5,578,356,250.0**	**2,577,175,661.0**

Նշված պայմանգրերի հաշվեքննության արդյունքում արձանագրվել է.

- ՀՀ ոստիկանության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև հանդերձանքի գնման համար 25.12.2019 թ. կնքված N ՀՀ ԿԱ ՈՁ ԳՀԱՊՁԲ-20/10/Բ/2/ԻԾ-6 պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման համար 2020 թվականի հուլիսի 1-ի դրությամբ ենթակա էր հաշվարկել և գանձել տույժ՝ 118.0 հազ. դրամ:
- ՀՀ ոստիկանության և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև հանդերձանքի գնման համար 12.02.2020 թ. կնքված N ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-32-4 պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման համար 2020 թվականի հուլիսի 1-ի դրությամբ ենթակա էր հաշվարկել և գանձել տույժ՝ 110.0 հազ. դրամ:
- ՀՀ ոստիկանության և «Գոռ Մնացականյան» Ա/Ձ-ի միջև առողջապահական և լաբորատոր նյութերի գնման համար 02.06.2020 թ. կնքված N ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ/3-2020/Ա-10-6 պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման համար 2020 թվականի հուլիսի 1-ի դրությամբ ենթակա էր հաշվարկել և գանձել տույժ՝ 7.9 հազ. դրամ:

Արձանագրվել է նաև, որ ի տարբերություն N ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-32 ծածկագրով գնման ընթացակարգի, որով «Սվիտեր» ապրանքատեսակի տեխնիկական բնութագրով սահմանվել էր գործվածքի 30

տոկոս բուրդ, 70 տոկոս պոլիէստեր բաղադրություն, N ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԱՊՁԲ-20/10/Բ/2/ԻԾ-6 ծածկագրով գնման ընթացակարգի «Սվիտեր» ապրանքատեսակի համար գործվածքի բաղադրություն չի նախատեսվել և «ՕԲՈՐՈՆ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ից N ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԱՊՁԲ-20/10/Բ/1/ԻԾ-2 պայմանագրով գնվել է գործվածքի անհայտ բաղադրության սվիտերներ: Փաստորեն, այս դեպքում չի կատարվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը՝ «Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը»:

Հաշվեքննության իրականացման համար ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված 2020 թվականի առաջին կիսամյակի ֆինանսական գործունեության հետ կապված հաշվետվությունների ցուցանիշները համադրվել են ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետարանի գործունեության էլեկտրոնային համակարգի LS Finans և LS Rep ծրագրերի տվյալների, ինչպես նաև առանձին հոդվածներով ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հետ:

Հաշվեքննության ընթացքում խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել, հայտնաբերվել են ոչ էական անհամապատասխանություններ, որոնք համատարած չեն:

Հաշվեքննությամբ հայտնաբերված անհամապատասխանությունները ներկայացվում են աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5

Հաշվեքննությամբ հայտնաբերված անհամապատասխանություններ

հազ. դրամ

Անհամապատասխանություն	Իրավական ակտ	Գումար
Մատակարարումների ուշացումների համար ենթակա է հաշվարկել և գանձել տույժ	«Պահապան» ՍՊԸ, Ն ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԱՊՁԲ-20/10/Բ/2/ԻԾ-6 պայմանագիր	118.0
Մատակարարումների ուշացումների համար ենթակա է հաշվարկել և գանձել տույժ	«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ, Ն ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-32-4 պայմանագիր	110.0
Մատակարարումների ուշացումների համար ենթակա է հաշվարկել և գանձել տույժ	«Գոռ Մնացականյան» Ա/Ձ, Ն ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ/3-2020/Ա-10-6 պայմանագիր	7.9
Տեխնիկական բնութագրով հստակ նկարագրված չեն ձեռբերվող ապրանքի հատկանիշները	«ՕԲՈՐՈՆ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ, Ն ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԱՊՁԲ-20/10/Բ/1/ԻԾ-2 պայմանագիր: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մաս	

ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

ՀՀ ոստիկանությունը «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ հետ 2017 թվականի փետրվարի 15-ին կնքել էր գույքի հավատարմագրային կառավարման թիվ ԲԸԱՀ ԾՁԲ-03/2017 պայմանագիր, որով յուրաքանչյուր տարի նախատեսվել էր վճարել ընկերությանը հավատարմագրային կառավարման ծառայությունների վճար և հատուցման ենթակա ծախսերի գումար: 2020 թվականի համար ընկերությանը նախատեսվել է վճարել հավատարմագրային կառավարման ծառայությունների դիմաց 414,200.0 հազ. դրամ և հատուցման ենթակա ծախսերի համար՝ 2,858,000.0 հազ. դրամ: 2020 թվականի առաջին կիսամյակում ՀՀ ոստիկանությունը ընկերությանը վճարել է 1,494,080.2 հազ. դրամ:

Հաշվեքննության իրականացման համար պահանջված տեղեկատվությունը ներկայացվել է ամբողջությամբ և սահմանված ժամկետներում:

Հաշվեքննվող օբյեկտի ղեկավարությունը ծանոթացել է հաշվեքննության արդյունքներով կազմված արձանագրությանը, առարկություններ և բացատրություններ չունի:

ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ՀՀ ոստիկանությունում 2020 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման նկատմամբ հաշվեքննության արդյունքում ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից ներկայացվել էին հետևյալ առաջարկությունները (աղյուսակ 6).

Աղյուսակ 6

ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից ներկայացված առաջարկություններ

ուսումնասիրել Ճանապարհային ոստիկանության կարիքների համար փոստային ծառայությունների գնման պայմանագրի գնագոյացումը և անհրաժեշտության դեպքում վերանայել պայմանագրի գինը	ընդունված է	ընթացքում
բյուջետային միջոցների տնտեսման նպատակով քննարկել մրցութային եղանակով փոստային ծրարների գնման նպատակահարմարությունը	ընդունված է	ընթացքում
ձեռնարկել միջոցներ նախորդ տարիներից փոխանցված դեբիտորական պարտքերը մարելու ուղղությամբ	ընդունված է	ընթացքում
ՀՀ ոստիկանության համակարգի կազմակերպություններին դրամաշնորհները տրամադրել նախատեսվող միջոցառումների ծախսերի հստակ հաշվարկների հիման վրա	ընդունված չէ	

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ոստիկանությանը՝

– ձեռնարկել միջոցներ արձանագրված անհամապատասխանությունները վերացնելու ուղղությամբ: